



## Վահան Թոթովչեց

Կյանքը հին հոռվմեական ճանապարհի վրա

8

ԺԼ

Մենք ունեինք և քուրք հարևաններ:

Շեմսին մեր քուրք հարևանի որդին էր, որի հետ մենք հասակակից էինք, գրեթե միասին էինք մեծացել: Մեծացել էինք երկու եղբոր պես . իրար վեզ էինք տվել, տնից վերցրած քաղցրավենիքներ էինք հյուրասիրել իրարու, միասին լողացել և միասին կմշտել նրա մեծ քրոջը՝ իրենից երկու տարով մեծ՝ լացացրել նրան միասին:

Սանիեն, նրա քույրը, կարծես եթերից էր շինված, այնքան քեթև, այնքան սպիտակ և ոսկեգույն էր, հակառակ իր եղբոր քուխ մորթին, սև մազերին, հոնքերին և մանավանդ սևասև աչքերին:

Նրանց պարտեզում կար մի մեծ ակացիայի ծառ: Ես նրան շատ էի նմանեցնում ակացիայի սպիտակ ծառին:

Սանիեն մի քիչ քրից էր խոսում ինչ-որ ընկել էր փոքրիկ եղած ժամանակ և վնասվել քայլ ինձ շափազանց դուր էր զալիս այդ քրի միջից խոսելը, այնքան էր դուր զալիս, որ ուզում էի բոլոր աղջիկներն էլ քրից խոսեին: Սանիեն առաջին աղջիկն էր, որի մարմնի ամենափափուկ տեղերին դպել էին իմ մատները, հաճույք էի զգացել և կարծում էի, որ խսկական

կինը պետք է քրից խոսի, որպեսզի ինձ հաճույք պատճառի:

Շեմսիի համար այդպես չէր, նա անընդհատ ծաղրում էր Սանիեին, որ քրից էր խոսում: Եվ Սանիեն ինձ մոտենում էր անսահման շերմությամբ, զգալով, որ, ընդհակառակն, ինձ դուր էր զալիս իր ծաղրի առարկա պակասությունը և թողնում էր, որ իմ ձեռքերս ազատորեն պտտեցնեմ իր մարմնի բոլոր մասերի վրա . . .

Իսկ այդ մարմինն ինչքա՞ն մասեր ուներ . . .

Ամեն անգամ ես նրա մարմնի մեջ գտնում էի ինձ համար բոլորովին անծանոթ մի վայր, ավելի և ավելի փափուկ և սպիտակ, ավելի սարսոս և հոտավետ:

Նման հեռավոր և անծանոթ երկրի, նման մթին և թավշյա թավուտների՝ ես ամեն վայրկյան գտնում էի մի նոր և նորագույն բարձրունք կամ խորություն, մի նոր և անսովոր սարսուո: Երբ մի նոր խորշ կամ մի նոր ծալք, կամ մի բարձրունք էի գտնում, ինձ թվում էր, որ Էլ նորը չկա, հանել և տիրել եմ արդեն անծանոթ և զգլիսիշ երկրամասի բոլոր կետերին:

Ո՞չ:

Էլի նոր ծալքեր, Էլի մի փոքրիկ ուսուցք, Էլի մի թավշյա, սպիտակ, փոքրիկ, բայց անհո՛ւն մի տարածություն . . . գծեր, որ վազում են, կլորություններ, որ ալիքավորվում են և բարձրանում: Հետևում եմ մի գծի-գնում է, դառնում, ոլորվում, թավալվում և հանկարծ անէանում մի սպիտակ և հղկված մարմարյա դաշտում:

Գնում եմ անծանոթից ավելի և ավելի անծանոթը, ահա պետք է հասնե՞մ . . .

Ինձ թվում է, որ ահա պետք է պարզեն ամբողջ մթին անծանոթը . . . Պիտի լինի առավոտ, պիտի հոսի արեգակի կաթը աշխարհի վրա, բայց Սանիեն չկա, վազել է պարտեզի կեռասենիների տակ, ծիծաղում է . . .

Պոկել էի առասպելական ծաղկի հազարավոր թերթերը, բայց դեռևս պետք է պոկելի հազար հազարավոր թերթեր՝ հասնելու համար ծաղիկի հոգնի հոգնին:

Ծիծաղում էր Սանիեն:

Կարկաչում էր երկինքներից հոսող կապոյտ առուն . . .

\*\*\*

Բայց երբեմն ես և Շամսին կովում էինք իրար հետ: Կովում էինք առանց պատճառի:

Նա ինձ հանկարծ անվանում էր «կյավուր», իսկ ես անմիջապես նրան անվանում էի «իթ»:

Այս բառերը մենք սովորել էինք մեր տներից և դպրոցներից: Բոլոր թուրքերը հայերին կյավուր էին անվանում, և բոլոր հայերը թուրքերին՝ իթ:

Չորս մոտ զալիս էին թուրքեր, արժանանում էին մեծազույն հյուրասիրության, բայց երբ գնում էին, սիրալիր և հարգալիր ողջույններով բաժանվում, հայրս նրանց ետևից մրթմրթում էր «իթեր»:

Իհարկե, երբ հայրս էր դուրս զալիս մի շափազանց հարգալից հյուրասիրությունից, նրա ետևից թուրքերը մրթմրթում էին «կյավուր»:

Կյավուրը և իթը, անհավատը և շունը չեին կարող ապրել իրար հետ:

Որևէ թուրք երբ ինձ կյավուր էր անվանում, ես ինքնաքերաբար իթ էի անվանում փոխադարձ, բացի Սանիեից:

Սանիեն ակացիայի ծաղիկն էր, որ բուրում էր գարնանային զով գիշերում:

Երբ ձերբակալված և շղթայակապ մի հայի կամ մի խումբ հայերի անցկացնում էին փողոցից դեպի բանտ, հայերը գլխիկոր անցնում էին, իսկ թուրքերը կանգնած՝ հրճվում էին, խնդությամբ լցվում:

Իսկ երբ մի թրքական դագաղ էր անցնում փողոցից, հայերը, աշքերը դեպի երկինք հառած, մրմնջում էին. «Փա՛ռք քեզ աստված»: Ուրախանում էին, որ մի թուրք պակասել է:

Ինչո՞ւ էր այդպես՝ ես չեի ըմբռնել, և առանց հարցուփորձի իմ մեջ խորացավ ատելություն դեպի «Չները», և Շեմսիի մեջ աճեց ատելություն դեպի «Լյավուրները»:

Սանիեն անհետացավ վանդակապատ լուսամուտների ետև,

[ Էջ ]

մի դաժան ամայ եկավ և ծածկեց արծաթյա լուսինը, և ես չկարողացա պարզել բուրավետ. զգլխիչ և ծաղկավետ ածանոթը, ինձ անծանոթ մնացին անհունորեն թարուն ծալքեր, գծեր, թավշյա տարածություններ, ես չկարողացա տիրել ամբողջ մարմարյա դաշտին:

Սանիեն անցնում էր մեր դոան առաշից՝ փաթաթված մի մանիշակագույն ամպով, իմ աշքերը մխրճվում էին նրա շաղրայից ներս և թափառում անծանոթ երկրի աստղաբորբ թաքստոցներում:

\*\*\*

Ամեն առավոտ և ամեն երեկո վանդակապատ լուսամուտից մի աշք է նայում ու մի ձեռք է երկարում դուրս և մի ծաղիկ նետում ոտներիս տակ:

Վանդակապատ լուսամուտը մեր դոնից մի քանի դուռ ներքևում է, պատկանում է մի թուրք կրոնավորի: Ուրբաթ օրերը նա ո՛չ մի քրիստոնյայի չի բարևում և այդ օրը ո՛չ մի քրիստոնյայի բարևին չի պատասխանում:

Բայց ուրբաթ օրն էլ միևնույն ձեռքը, փափուկ, ինչպես առավոտի հասմիկը, երկարում է դուրս, մի ծաղիկ նետում և քաշվում ներս:

Վանդակապատ լուսամուտից լսվում է նրա մեղմ ծիծաղը, ուրախության զսպված ճիշը:

Թուրք կրոնավորի երրորդ կինն է, պատանի մի աղջիկ, բանտարկված վանդակների մեջ:

Իմ մեջ բոցավառվում է մի կարոտ, ուզում եմ տեսնել նրան, խոսել հետը:

Վերցնում եմ նետած ծաղիկը, տանում եմ տուն, հոտոտում եմ անվերջ: Այդ ծաղկից անցնում է իմ հոգուն մի անիմանալի դող, խայտանքով լեցուն մի սարսուո:

Կրոնավորը վաթսունն անց է, կոացած մեջքով, շար, դեղին աչքերով: Ածիլում է ցցված այսոսկրները, միրուքը կլորում, հինայում: Ամեն դուրս գալուն խստիվ պատվիրում է մյուս կանանց հսկել Բահրիեին, չթողնել լուսամուտի մոտ գնալ, ճանձ չպետք է անցնի անից ներս:

[ Էջ ]

Բայց Բահրիեն, գարունքից կրակված, միջոց է գտնում ոչ միայն լուսամուտին մոտենալու, այլև ձեռքը դուրս հանելու, ծաղիկ նետելու և շնչալու:

Վաղը պարտեղն իշիր, քաֆթառները գնալու են, լսեցի մի օր լուսամուտի ետևից:

Այդ ձայնը կարկաշեց իմ ականջին, զարթեցրեց իմ մեջ կինը . . .

Լսեցի ու անցա, բայց կարծես նա պոկեց սիրտս և լուսամուտի նեղ վանդակներից քաշեց ներս:

Հեռացա, բայց ձայնը շարունակեց հնչել իմ հոգում, ավելի և ավելի ուժգին:

Կանգ առա մի ծառի շվարի տակ, արևը ծաղիկներ է հյուսել գետնի վրա, տեսնում եմ Բահրիեին այդ հյուսվածքի մեջ, հովը շնկշնկում է տերևների մեջ Բահրիեն է խոսում .

Վաղը պարտեղն իշիր . . .

Գիշերը կանգնեցի կտորի վրա, ակացիայի ճյուղերը կոացել են, լուսինը՝ ճիշտ մեր կտորի վրա, Բահրիեի դեմքն եմ տեսնում լուսնի վրա՝ խոշոր, սև աչքերով,

մազը կարծ կտրած, թափվել է ճակատի վրա: Ժպտում է:

Առավոտյան բարձրացա մեր պարտեզի պատի վրա, ցատկեցի հարևանի պարտեզը, շորերս թրջվեցին առավոտի ցողից: Պետք է երեք պարտեղից անցնել Բահրիեի պարտեզը մտնելու համար:

Բարձրացա նրանց պարտեզի պատի վրա: Դողում եմ, բայց ինձ թվում է, որ կարող եմ թռչել:

Բահրիեն տեսավ ինձ: Վազեց:

Ես ներքնումն եմ, ծաղկած նոնենու տակ, քիչ հեռուն գտնվող եղրևանին ծածկում է ինձ: Բահրիեն երևաց, կանգ առավ, հևում է, դողում, ձեռքը դրած ուռած կրծքի վրա: Գրկեցի նրան, հարբեցի նրա բուրումից, այրվեցին շրթունքներս . . .

Գնանք, ասում է, ներս գնանք:

Կրոնավորը գիշերով գնացել է հին քաղաքն իր երկու կանանցով . ինչ-որ ժառանգական դատ կա, դրսի դուռը փակել են Բահրիեի վրա, ոչ մի կասկած չկա, որ նա կարող է դուրս գալ տնից:

Ձեռքս բռնած՝ Բահրիեն տարավ ինձ ներս, ննջարանք:

[ Էջ ]

Փաթաթվում է, լաց է լինում, ժպտում, համբուրում: Անկողինը դեռևս չի շինած, նոր է դուրս թռել միջից: Գրկեցի թարմ, պատանի աղջկան, թակալվեցինը անկողնու վրա: Նարբեցուցիչ է կնոջ բուրումը:

Այրեց ինձ կինն առաջին անգամ իմ կյանքում:

Վախը և առաջին ուրախությունը պաշարեցին ինձ, շղթայեցին, և ընկղմվեցի առաջին հանցանքի քաղցրության մեջ:

Երգեցին բոլորը, իրերը ճշացին խայտանքից .

Բահրիե՛ . . .

Անշարժ պառկած է, լուսամբ ապրում է մի քանի վայրկյանի դարավոր բերկրանքը:

Գնա՛, շուտ հեռացի՛ր:

Սկսում է լաց լինել:

Երեկոյան պիտի գան, ասում է:

Նրա արցունքները խառնվում են երջանկության կապույտ կաթիլներին:

Երևի ցցվում է նրա դեմ ծերունին՝ դեղին աչքերով:

Գալիս է մինչև ծաղկած նոնենին: Պոկեցի մի կարմիր ծաղիկ, փակցրի նրա կրծքին, բռնեցի ձեռքը, համբուրում եմ . . .

Բարձրանում եմ պատի վրա, լսում եմ նրա լացը և ուրախության հևքը: Բահրիեն կանգ է առնում մուգ-կանաչ եղրևանու հովանու տակ, կարոտազին նայում:

Յատկում եմ մյուս պարտեզը և հավիտենապես բաժանվում առաջին կնոջից:

\*\*\*

Հաջորդ օրը ես հանդիպեցի Վերոնիկային: Քրիստինեի հորեղբոր աղջկան: Վերոնիկան երկնուղեշ աղջիկ էր, խարտյաշ աչքերով, եղնիկի նման թեթև և վարդի գույնով: Ամեն անգամ, երբ ես նրան հանդիպում էի, մերկանում էր իս հոգին նրա առաջ, բայց այս անգամ իմ հոգին ծածկվել էր վարդագույն ամորի քողով: Ես չկարողացա նայել նրա աչքերի մեջ: Բոնեցի ձեռքը, համբուրում եմ ու լաց լինում: Ուզում եմ խոստովան ել, բայց հոգիս չի մերկանում, ես ինքս կանգնած եմ իմ հոգու փակ դոների առաջ:

[ Էջ ]

Մայրիկդ հիվա՞նդ է, անմեղորեն հարցնում է Վերոնիկան:

Ո՛Հ, մայրիկս հիվանդ չէ:

Ո՛Հ մի կերպ նա չի կարող գուշակել: Նա ման է զալիս դեռևս անմեղության կապույտ բլուրների վրա: Իհարկե, նրա կրծքում ևս շշնջում է բնությունը ինչոր դյութիչ, կախարդական երգ, բույց հեռու է իմ հանցանքը գուշակելուց:

Վերոնիկան երբեք, երբեք չէր կարող պատկերացնել, որ մի ծաղկատի կին, բաց է արել իր մարմնի թաքուն գանձերը իմ առաջ ո՛չ միայն առանց ամաշելու, այլև բորբոքալից կարտով, կարտովը գիշերը բացվող և լուսաբացի շողերին սպասող ծաղկին:

Գնում ենք պարտեզի խորքը: Ծաղիկներ են ճգմվում մեր ոտների տակ, իսկ ծառերից մրգեր են կախվել: Որոշում եմ, որ երբ հասնենք բարձր թթենուն, խոստովանեմ իմ հանցանքը, բայց երբ հասնում ենք թթենուն, Վերոնիկան սկսում է վազվզել և աղաղակել . «Ինձի բոնե»: Վազում եմ, շեմ ուզում շուտ բոնել, վերջապես բոնում եմ, և մեր շրթունքները, անիմանալի ինչոր մղումից, փարվում են իրար: Բոլոր տերևները թվում են, ծափ են տալիս, մրգերը երգում են, իսկ պարտեզը, իբրև ոսկյա ծնծղա, թթոում են:

Վերո՞ն, լսվում է ցածր:

Դառնում ենք: Քրիստինեն: Մոտենում ենք: Քրիստինեն ամբողջ մարմնով դողում է: Հազիվ շշնջում է .

Բենոն կուգա:

Թո՞ղ գա, ասում է Վերոնիկան և թևերը վեր բարձրացնելով՝ միրգ է քաղում: Նրա ստիճները կարծես ուզում են երկինք թռչել:

Բենոն Վերոնիկայի եղբայրն էր և իմ դասընկերը: Նրա մոտենալուց չէր, որ Քրիստինեն դողում էր, նա դողում էր մեր համբույրից:

Բենոն մոտեցավ: Միասին բարձրացանք թթենին: Թութն այրվել է արևից, ցամաքել, քաղցրացել:

Վերոնիկայի զլխի վրա ևս փշրվեց երկնքի փիրուզը, փշեց անապատի մահաշունչ խորշակը, և նրա մարմմինը ծածկվեց ավազների տակ:

Միայն առավոտյան աստղը մի քանի կաթի արցունք թողեց նրա վրա, ապա երեկոն իջավ արյունալից աչքերով:

[ Էջ ]

\*\*\*

Առավոտ: Գորշ, մոայլ երկինք, բայց ձյունն ամբողջ գիշեր թափվել է, ծաղկել երկիրը շուշաններով:

Պայուսակը կոնատակիս դուրս եմ գալիս տնից՝ վազելու դպրոց: Շները ողջունում են իմ առավոտը:

Տեսնում եմ՝ մարդիկ քայլում են արագ, լու՛ո, ահաքեկված աչքերով: Մի կին է կանգնած առաջին փողոցի անկյունում, նրա աչքերում անդնդախոր լուրթյուն կա:

Ընդհանուր լուրթյուն է տիրում, կարծես ձյունը մի վիթխարի դագաղի սպիտակ սավան է: Բնազդորեն զգում եմ, որ մի քան կա, որն ինձ ահ է ներշնչում, այդ ահն աճում է, ինչքան առաջ են շարժվում քայլերս:

Մի տան լուսամուտի վարագույրը խորհրդավոր կերպով քաշում են ներսից, կարծես չեն ցանկանում, որ օրվա լույսը թափանցի ներս: Մեկը դուռը բաց է անում, երկյուղալից աչքերով նայում է փողոցին վերից վար ու փակում:

Հանդիպում եմ Գրիգոր աղային, դանդաղաշարժ մի մարդ, բայց աճապարում է:

Ո՞ւր կերթաս, հարցնում է:

Դպրոց, պատասխանում եմ:

Ուզում է մի քան ասել, բայց ձեռքը թափ է տալիս ու անցնում: Կարծես վազում է, եզան նման այդ դանդաղաշարժ մարդը, կարծես փախչում է վերահաս վտանգից:

Մի խումբ մարդիկ կուշ եկած, քայց արագ քայլերով աճապարում են քաղաքի մեծ հրապարակից: Ուզում եմ մի քան հարցնել, քայց ոչ ոք գլուխը վեր չի քարձրացնում: Արագ անցնում են:

Խանութները փակ են: Ո՞չ կիրակի է, ո՞չ էլ ուրբաթ: Մեկ-մեկ կիսաքաց խանութներ կան: Ներս եմ նայում փեղկերից:

Մարդիկ նստած են անկյունները, կծկված, չեն խոսում, միայն ծխում են:

Ոչ ոք, ոչ ոք չի խոսում, նայում են ինձ մեկ-մեկ ցավագին ժպտում:

Որքան մոտենում եմ մեծ հրապարակին, այնքան խորանում է լոռությունը:

Մի կին ահաքեկված դուրս է զալիս, չսանրած մազերով, գրեթե գիշերային շորերով, բռնում է տասը տարեկան մի մանկան ուսից և աճապարանքով քաշում ներս, դուռը փակում:

Հասնում եմ հրապարակ:

Հրապարակի մեջտեղում, ընդհանուր ձյունի սպիտակության մեջ, մի սև կույտ: Չորս զինվոր՝ փայլվլացող սվիններով, կանգնել են այդ սև կույտի բոլորտիքը, հատ-հատ մարդիկ, կծկված և ահաքեկված, մոտենում են, դիտում, աշքերը փակում և անցնում լուս:

Մոտենում եմ:

Տեսնում եմ առանց մարմնի մի գլուխ:

Զյան վրա արյունը սառել է, սևացել: Գլուխը պառկած է, քնելու նման:

Դառնում եմ մյուս կողմը թևերը ձյան մեջ խրած մի մարդ՝ առանց գլխի:

Սառած մնացել եմ, ոտքերս չեն շարժվում:

Չինվորներից մեկը հրամայում է .

Հեռացի՞ր:

Հեռանում եմ:

Առավոտյան, մքնշաղին, սուլթանական բոնակալությունը կտրել է երկու հեղափոխականի գլուխ:

Մյուսը քաղաքի վերևի հրապարակում է:

Առաջին անգամ տեսնում եմ չար բոնակալության պատկերը, զարհութելի պատկեր:

Տիրեց իմ մանկական հոգին:

Ուզում եմ տուն դառնալ, քայց հրապարակի վերևում բարձրանում է մի աղմուկ: Բազմություն: Վազում եմ:

Ֆուադ բե՛յը, Ֆուադ բե՛յը . . .

Ֆուադ բեյը գեղեցիկ գլխով, խարտյաշ, երազուն աչքերով մի թուրք է, երիտասարդ, լայնածակատ, նրբակազմ, քայց առնական, հազնում է չերքեզի շորեր, քայլում է դանդաղ ու հպարտ: Ֆուադ բեյը Պոլսից աքսորված թուրք հեղափոխականներից մեկն էր, որ աղմուկ էր բարձրացրել հեղափոխականների գլխատման համար:

Ահա բարձրացավ նա մի խանութի քարե աստիճանների վրա և խոսում է հավաքված բազմության: Նա այլևս այն երազուն աչքերը շունի, մոլեգին մի նայվածք, վսեմորեն վայրենացած,

[ Էջ ]

Փափախը ձեռին, նրա խարտյաշ մազերը թափված են լայն ճակատի վրա: Հազիվ կարողանում եմ լսել և հասկանալ մի քանի քառ անկցի՛ և այլն: Վրա են հասնում բոնակալության հավատարիմ ոստիկանները, պաշարում են Ֆուադ բեյին, հրում, կապում ձեռքերը, քշում տանում:

Բազմությունը, ահարեկված, զարհուրած, ցրվում է:

Իշնում է նորից լոռությունը՝ ծա՛նը, ծա՛նը:

Դառնում եմ տուն: Բոլոր լուսամուտների վարագույրները քաշված են:

Ներս եմ մտնում:

Ո՛չ ոք չի խոսում:

Փաթաթվում եմ մորս:

Նա լու՛ն շոյում է գլուխս:

Խեղդում է ինձ այդ լոռությունը:

Ուզում եմ ճշալ, բայց շղթայված եմ լոռությամբ: Ամբողջ քաղաքը դարձել է սի գերեզման:

Սրտիս մեջ երբեմն լսվում է թնդյուն, խոլ արձագանքում և մարում:

Կտրված գլու՛խ . . . Չե՞ ոք միայն ոչխարի գլուխն են կտրում:

Ո՞վ է կտրել այդ գլուխները:

Ահմեղ Զավուշը, Ահմեղ Զավուշը . . . շշնջում են:

Ահմեղ Զավուշը դառնում է իմ աշքին այն առասպելական հրեշը, որի մասին շատ էի լսել, բայց երբեք չէի տեսել և չէի էլ կարող պատկերացնել:

\*\*\*

Մի անձրևոտ գիշեր դաշունահար սպանվեց մեր դպրոցի տեսուչ Հակոբ Սիմոնյանն իր տան առաջը գտնված փշենու ծառի տակ:

Առավոտյան լուրը կայծակի պես տարածվեց քուրքերը դաշույնի հարվածներով սպանել են Հակոբ Սիմոնյանին, քուրքե՛րը, շնե՛րը . . .

Լուրն ինչքան տարածվում էր, ատելությունն այնքան խորանում էր և փրփրում:

Քաղաքի մի քանի փողոցներում արդեն ընդհարումներ էին տեղի ունեցել հայի և թուրքի միջև: Թուրքերը անցնելիս՝ հայերը հայինել էին նրանց կրոնը,  
Մուհամմեդին, և սկսել էր կոհվը:

Ամբողջ օրն առաջնորդարանում ժողով էր տեղի ունենում, ուզում էին հեռագրել  
Պոլիս՝ պատրիարքին՝ բողոքելու տեղի ունեցած ոճագործության դեմ: Քաղաքը  
պաշարվեց զինվորներով, ամեն մի փողոցի անկյունում զինված ոստիկաններ էին  
կանգնած ու արգելում էին անցքը և անցնողներին ձերբակալում: Ձերբակալում  
էին միայն հայերին: Շատերը, ձերբակալությունից խուսափելու համար,  
սպիտակ ապարոշ էին կապում իրենց ֆեսի շուրջը և դուրս դնում:

Ոստիկանները, տեսնելով ապարոշը և կարծելով մոլլաններ, ազատ անցը էին  
տալիս: Մինչև երեկո քաղաքը լցվեց «մոլլաններով»:

Երեք օր շարունակվեց այդ դրությունը և զնալով դարձավ մի մութ մղձավանշ:  
Դիակը մնաց իր բնակարանում՝ հարազատներով շրջապատված:

Հնարավորություն չկար թաղելու:

Երեք օր հետո կատարվեց թաղումը, և ձերբակալվածներն ազատ արձակվեցին,  
որպեսզի մասնակցեն թաղմանը: Բազմահազար մասսա էր հավաքվել  
թաղմանը, եկել էին մարդիկ և հեռավոր գյուղերից: Թաղումը տեղի ունեցավ  
առանց որևէ ծայրահեղությունների, բոլորն էլ հանգստացել էին, գլուխները կախ  
արել, բոլորն էլ երևում էին մի տեսակ ամոթահար:

Ինչո՞ւ:

Պարզվել էր, որ Հակոբ Սիմոնյանին սպանողը թուրք չի եղել, այլ մի երիտասարդ  
հայ, այն էլ տեսչի սաներից մեկը, որը երկու տարի առաջ ավարտել էր և  
զբաղվում էր ուսուցչությամբ:

Ինչո՞ւ էր սպանել Հակոբը Հակոբ Սիմոնյանին:

Սպանողի անունն էլ Հակոբ էր:

Հակոբ Սիմոնյանը ունեցել էր մի ազգականուիհի, սիրուն մի աղջիկ, որին ոճրագործը սիրահարված էր եղել:

Աղջկա ծնողները տեսչից խորհուրդ են հարցրել իր աշակերտի մասին, որպեսզի վերջնականապես որոշեն աղջկա ճակատագիրը:

Անմիտ և խենք տղային մեկն է, պատասխանել էր տեսուչը:

Ծնողները, իրենց աղջկան համոզելու համար, հայտնում են նրան ազգական տեսչի՝ իբրև քաղաքում ամենամեծ մտավորականի, կարծիքը, աղջիկն էլ, իր հերթին, հայտնում է Հակոբին տեսչի այդ կարծիքը՝ բացատրելու համար այն դժվարությունները, որոնք ծառացել են իր դեմ՝ նրա հետ կապվելու ճանապարհին:

Եվ ահա Հակոբը, անմիտ և խենք, կտրել է տեսչի առաջ կես-գիշերին և դաշունահար արել տեղնուտեղը:

Քաղաքի ամենավերջին թուրքը մազաշափ մասնակցություն չէր ունեցել այս ոճրագործության մեջ: Հայերը, ամոթահար, լուցին, բայց թուրքերն աշխատեցին շմոռանալ այն:

\*\*\*

Այս դեպքից մի ամիս անց, քաղաքի ամենակատաղի թուրքերից մեկի՝ Ահմեդ Չավուշի կինը խեղդամահ գտնվեց իր սեփական անկողնում:

Ահմեդ Չավուշը մունետիկ էր, բարձր և խոպոտ ձայնով:

Եթե կառավարությանը հարկ լիներ մի որևէ հայտարարություն անել, կանչում էր Ահմեդ Չավուշին և նրան էր հանձնարարում անել այդ հայտարարությունը: Հանկարծ դողանջում էր Ահմեդ Չավուշի ձայնը. «. . . շանսացողները կբարձրանան կախաղան . . . »: Նրա հայտարարությունները միշտ վերջանում էին պատժի գերազույն շափի անողորմ հայտարարությամբ:

Եվ հանկարծ, կես-գիշերին, մեր թաղում լսվեց Ահմեդ Չավուշի ձայնը . «Հայերը կնոջ խեղդեցի՞ն ու փախա՞ն, փախա՞ն . . . » այս բառերից հետո լսվեց մի կատաղի մոնշոց, կարծես մի գազան էր ողբում: Զայնը լսվում էր կտորից, նա բարձրացել էր կտորը, պտույտ էր գալիս իր առանցքի վրա և գոռում, ձեռները վեր բարձրացնելով և ճոճելով օղում՝ «հայերը կնոջ խեղդեցին ու փախա՞ն . . . »:

Կես-գիշերին բոլորը նստեցին իրենց անկողինների մեջ, քնից զարթնած և սարսափած, խաչակնքեցին և լուցին՝ սպասելով, թե ի՞նչ աղետ պիտի պատահեր առավոտյան:

Բայց աղետը չսպասեց առավոտյան, եկավ հասավ կես-գիշերին:

Ահմեդ Չավուշի տունը լցվեց ոստիկաններով ու թուրքերով:

Հայերը եկել էին, մտել տունը, Ահմեդ Չավուշին կապել, բերանը բամբակով փակել, և երբ ճգնել էր իրեն ազատել, ծեծել էին, կնոջը խեղդամահ արել անկողնում և փախել, այս էր Ահմեդ Չավուշի պատմությունը ոստիկաններին և թուրքերին:

Հայերն անգամ հավատում էին այս պատմության, որովհետև վրեժխնդրություն էին կարծում: Ամիսներ առաջ Չավուշն էր եղել, որ մսագործի յաթաղանով կտրել էր երկու հայ հեղափոխականների գլուխները հրապարակով, միակ մարդը, որ համաձայնել էր դահճի դեր կատարել, գլուխները կտրելուց հետո Էլ՝ ավով վերցրել էր արյունը, քսել միրութին և կտրված գլուխներից մի քայլ հեռու չորել և աղոթել ալլահին:

Կես-գիշերին սկսվեցին ձերբակալումները և տևեցին մինչև առավոտ:

Առավոտյան բանտը լցվեց հայերով: Մինչև բանտ հասցնելը ծեծում էին, վիրավորում, թքում, անպատվում:

Դեպքի երեկոյան Չավուշը կնոջն ասե՛լ էր, որ գնում է գյուղ: Շատ անգամ էր նա գյուղ գնում: Գնացել էր շուկա ձի վարձելու: Խոստացել էին ձիապանները, բայց սպասեցրել: Ահմեդ Չավուշը մինչև կես-գիշեր սպասել էր ձիուն, չեր ստացել և

հուսահատ տուն էր վերադարձել կես-գիշերին, տեսել էր մի ջահել թուրք իր տանը, կինն էլ նրա գրկում: Չավուշը, կատաղած, ջահել թուրքին խեղդել էր և նետել հորը, կնոջը խեղդել էր և թողել անկողնում, բարձրացել կտորը և սկսել էր ռռնալ՝ «Ճայերը կնոշ խեղդեցին ու փախա՞ն . . . »:

Ահա այսպես էր պատահել դեպքը:

Ջահել թուրքի դիակը հանեցին հորից, ձերբակալեցին Ահմեդ Չավուշին: Հորը նետված թուրքի ծնողները հարուստ էին և ազդեցիկ, հետապնդեցին արդարադատությունը և Ահմեդ Չավուշին աքսորեցին Կոնյա՝ արգելելով նրան վերադառնալ:

Բոլոր ձերբակալված հայերին միասին ազատ չարձակեին, այլ մեկ-մեկ, կամաց կամաց, ամենավերջինին՝ ամենավերջին օրն էլ հարցաքննելով Ահմեդ Չավուշի ոճիրի կապակցությամբ:

\*\*\*

Մի թուրք մոտենում էր մի հայ խանութպանի և հավաննելով մի ապրանք՝ արժեքն էր հարցնում:

Արշինը տասը դուրուշ, պատասխանում էր հայ խանութպանը:

Հինգով տուր, առաջարկում էր թուրքը:

Չեմ կրնար տալ, ընծի արդեն ութը դուրուշ մալ է եղեք:

Թուրքը պահանջում էր, որ հինգով տա, հայը չէր տալիս, թուրքը հեռանում էր ատելությամբ, ատամները կրծտացնելով:

Անցնում էր մեկ-երկու օր, և ահա փողոցում մի իրարանցում թուրքերը ծեծում են ինչ-որ հայու:

Արշինը հինգ դուրուշով ապրանք շտվող հայ խանութպանն է ծեծ ուտողը:

Թուրքն էլի էր հանդիպել նրան փողոցում: Թուրքը հարցրել էր .

Հինգ դուրսուվ չե՞ս տար, զյավոր:

Ո՛չ,

Եվ քուրքն սկսել էր բղավել:

Դինիմն սեռկտի . . . հասեք, ես խաղաղ անցնում էի, Մուհամմեդին հային հային, սուրբ կրոնը հային՝ գ . . .

Ահա ամբոխը կոտրտում էր հայ խանոթպանի քիթն ու քերանը, իսկ հայ խանոթպանն ամեն մի հարվածին պատասխանում էր .

Հինգ դուրսուվ չեմ տար, ամա ձրի կուտամ, տարե՛ք:

Ոչ ոք չէր հարց տալիս, թե ինչո՞ւ ծեծ ուտող մարդն այդ խոսքերն է աղաղակում, ի՞նչ կապ ունեն այդ խոսքերը սուրբ կրոնի հետ:

[ Էջ ]

\*\*\*

Պատահում էր ուրիշ դեպ:

Մի քանի հայ, ամայի մի վայրում, հանդիպում են մի քուրքի, բոլորովին անծանոք:

Հայդե՛, ծո, աղեկ բռնեցինք . . .

Մոտենում էին քուրքին, խոսակցության բռնվում, անարգական խոսքեր ասում, քուրքը պատասխանում էր փոխադարձ անարգական խոսքերով:

Ծո՛, դուն ո՞ր շունն ես, որ Էդակ կպատասխանես, հավկըլե, ծո:

Ձեռաց սպանում էին, զցում մի փոս և հեռանում: Մի քանի օրից գտնում էին դիակը և սկսում էին ձերբակալությունները:

\*\*\*

Ոսկերիշ Տիգրանը մի այգի ուներ քաղաքի սպանդանոցի մոտ: Ես գնացել էի մեր ազգականի այգին, որը գտնվում էր ոսկերիշ Տիգրանի այգուն կից:

Կեսօրին մի թուրք մտավ այգին մի կողով շալակած և խաղող ուզեց: Տիգրանը շուզեց տալ, բայց մայրը միշտ մտեց.

Տո' որ, շուն է, կը դուշմըննա:

Տիգրանը տվեց նրան խաղող, բայց ոչ կողովը լցվելու շափ: Թուրքը պահանջեց, որ ամբողջ կողովը լցնի:

Կողովը լցնեմ, չես կարող շալակել, ծանր է, ասաց Տիգրանը, կատակելով և հասկացնելով, որ ավելին չի ցանկանում տալ:

Թուրքը պահանջեց, որ անպայման կողովը լցնի: Մայրն էլ միշտ մտեց, բայց Տիգրանը զայրացավ և մերժեց:

Այդքան ը որ ձրի տվի, հերիք է, հայտարարեց Տիգրանը: Թուրքն էլի պահանջեց: Նրանք կպան իրաբ:

Տիգրանը նիհար և թուլակազմ մի մարդ էր, իսկ թուրքը՝ ուժեղ և հաղթանդամ: Տիգրանը պարտվեց, կուշտ ծեծ կերավ և մի ատամն էր վրա տվեց: Ոչ ոք չսիշտ մտեց:

Շուն է, կերթա հազար ու մեկ խառնակշություն կենե, ասին բոլորը և թույլ տվին, որ Տիգրանը ծեծն ուտե:

Հինգ օր հետո Տիգրանին կանչել էին դատի:

Ես գնացել էի դատարան այդ դատը տեսնելու, հակառակ մորս պատվերին, որ այդպիսի տեղեր չգնամ:

Թուրքը դատարան ներկայացավ՝ ճակատը սպիտակ թաշկինակով կապած: Իբր թե Տիգրանը խփել էր քարով նրա ճակատին և ջարդել: Թուրքը ներկայացրեց

դատարանին բժշկի տեղեկանքը վերքի մասին: Տիգրանին երկու ամիս բանտ վճռեցին և ծեծելով տարան բանտ, իսկ Տիգրանը դատարանում միայն մի բան էր խնդրում.

Քանդեցե՛ք թաշկինակը և տեսե՛ք թե՛ վերք կա՞:

Դատարանը գտավ, որ կառավարական բժշկի տեղեկանքը կա և բավական է:

Երբ Տիգրանին տարան բանտ, և մենք Էլ դուրս եկանք, ես իմ այս աչքերովս տեսա, որ քուրքը իջավ փողոց և հանգիստ սրտով քանդեց ճակատի թաշկինակն ու դրավ գրպանը ոչ մի վերքի հետք, մինչև անգամ ճանկոտութի հետք չկար ճակատի վրա:

\*\*\*

Մի օր, ցերեկով, մի սարսափելի լուր տարածվեց մի հայ սափրիչ ածիլվող մի քուրքի վիզն է կտրել:

Լուրը տարածվեց կայծակի արագությամբ: Ամեն մարդ ջանաց անմիջապես խանութը փակել և տուն գնալ: Տասննինգ րոպեում քաղաքի շուկան ստացավ կիրակնօրյա կերպարանք՝ դատարկվեց:

Ի՞նչ էր պատահել:

Հայ սափրիչը քուրքին ածիլելիս է եղել, երբ սափրիչին մի ծանոթ հայ ներս է մտնում և նրա ականջին շշնչում.

Դուրսը քուրքն ու հայն իրար են խառնվեր, դուն ի՞նչ կենես հնու:

Այդ եղել էր պարզ մի կատակ:

Սափրիչը, մի վայրկյան մտածելով, որ դուրսն արդեն սկսել են, իր առաջ կա կենդանի պատեհություն, լավ է ձեռաց օգտվել այդ պատեհությունից, կես քնի մեջ ածիլվող քուրքի վիզը կտրում է, ընկնում դուրս՝ ածելիով խառնվելու դրսում սկսված պայքարին: Տեսնում է, որ դրսում ամեն ինչ խաղաղ է և ահաքեկված

զարհուրելի հեռանկարից՝ ձին նստում է ու փախչում քաղաքից դուրս:

Երեկոյան սափրիշի կնոջը ոստիկանները տանում են բանտ ծեծելով և ստիպելով.

Ամուսնուղ թարստոցն ասա:

\*\*\*

Հոչակվեց օսմանյան սահմանադրությունը:

Համբույրներ, գրկախառնումներ, ողջագուրումներ, սիրո և եղբայրության լիրիկական գեղումներ:

Բաց արին բանտի դռները, դուրս եկան քաղաքական բանտարկյալները, որոնց մեջ և իմ երկու ուսուցիչները:

Կառավարական շենքի առաջ կատարվեց ազատության հանդես, դուրս եկան և խոսեցին թուրք հեղափոխականները Կանունը Եսասիի մասին:

Առաջին անգամն էր, որ ես տեսնում էի թուրք հեղափոխականներ. մի՞քե թուրքը երբեմն կարող էր հեղափոխական լինել այսպես էին ինձ ասել, այդպես էլ հավատացած էի:

Այդ հանդեսից էի վերադառնում, հոգնած, փոշեթաթավ, քաղցած և բերկրանքով լեցուն:

Փողոցում հանդիպեց ինձ Շեմսին:

Երկար ժամանակ էր մենք իրար չէինք բարևում: Նա իմ հորս էր գյավուր անվանել, ես էլ իր հորը իթ անվանել: Մենք շատ էինք այդ ածականներն ասել իրարու և հաշտվել, բայց այս անգամ մենք վիրավորել էինք մեր ծնողներին:

Մանավանդ ես դաշունահար վիրավորվել էի նրա խոսքից,  
որովհետև այն ժամանակ, երբ Շեմսին հայինեց հորս՝ նա գերեզմանում հող էր  
դառնում...

Շեմսին ինձ նայեց աչքի պոշովը:

Ես Էլ:

Ժպտացի:

Նա Էլ:

Ես չեմ կարող ասել, թե ինչպես մեր ոտները շարժվեցին ու մոտեցան իրար և մեր թները փաթաթվեցին իրարու:

Շեմսին ինձ քաշեց-տարավ իրենց տունը: Օտարոտի թվաց այդ հին տունը, վաղուց էր չեմ տեսել: Շեմսին ինձ առաջնորդեց ներս, ոտնակոխելով տան հարեմական սովորությունները: Համբուրեցի նրա մոր ձեռքը, դարձա և տեսա Սանիեին, որ կանգնած ժպտում էր: Իմ և նրա ձեռքերը երկարեցին իրար, ինչպես մարդու սեփական ձեռքերը, երբ սիրտը ցանկանում է ծափահարել:

Շատ վաղուց էր ես Սանիեին չեմ տեսել առանց մանիշակագույն ամպի:

Նա մի քիչ, շատ քիչ, կորցրել էր իր եթերայնությունը, քայց դարձել էր արյունալի:

Երբ ես ձեռքն ուժգին սեղմեցի, կարմրեց, շրթունքները դողացին և ինչոր շշնչաց՝ մորը դառնալով: Այդ շշուկի մեջ այնքան կանացիություն կար, որ ես նրան անմիշապես պատկերացրի ավազանում լողանալիս, և ավազանի սառը ջուրը սառսորում է նրա մարմնի արևային շերմությունից:

\*\*\*

Համբուրներն ու գրկախառնումները ոշինչ չօգնեցին, որովհետև մի քանի օր հետո իսկ, «իմաստուն» հայեր շշնչացին ուրիշ ականջների՝

Չի խաբվիք:

Եվ «իմաստուն» բուրքեր ևս շշնչացին՝

Զգույշ, հայերը կուզեն մեր երկիրը իշխեն և վերացնեն կրոնը:

Կարծես ժամանակը ետ դարձավ:

\*\*\*

Երբ մենք փոքր էինք, մի խաղ էինք խաղում, որ կոչվում էր «հայ և քուրք»: Դա պարզ մի խաղ էր՝ մեջտեղը մի քարակույտ, որ ամրոց էր կոչվում, մանուկները բաժանվում էին երկու մասի՝ ամրոցը գրավելու: Բաժանված խմբերից մեկը կոչվում էր հայ, իսկ մյուսը՝ քուրք:

Ծո՛, քուրքերը մտան...

Հայերը քերդին կմոտենան, տվե՛ք գլխներուն:

Եվ սա համարվում էր անմեղ խաղ:

Այդ խաղը շարունակվեց մինչև իմադերիալիստական պատերազմը: Այդ պատերազմում խաղացվեց նույն խաղը, մի-այն այն տարբերությամբ, որ այս անգամ կողմերն իսկական հայեր և քուրքեր էին, խաղում էին լուրջ և իրական հողի վրա, անսահման ատելությամբ բոցավառված:

Ո՞չ ոք, բացարձակապես ո՞չ ոք մեզ չէր ասում թե՝ մի խաղաք այդ խաղը: Երբ մենք խաղում էինք, մեծերը, քեղերով մարդիկ, շատ լուրջ և իմաստուն մարդկանց համբավ ունեցող մարդիկ, դիտում էին այդ խաղը և Ժպտում: Եվ, առհասարակ, դիտողները հրճվում էին, երբ «քուրքեր» պարտվում էին: Խաղի պաֆոսն այնքան էր խորանում, որ «հայերը» «քուրքերին» խաղի ժամանակ կանչում էին այն անարգական ածականներով, ինչ որ իրական կյանքում, խաղից դուրս:

Երբ տարանում էինք՝ սկսում էինք աղաղակել.

Վուտուն իթերե... (Զարկե՛ք շներին):

Կյավուրլար կիրդիեր... (Կյավուրները մտան):

Խաղն սկսելու համար մենք միշտ կանգնած էինք լինում մի դժվարության առաջ՝ ո՞չ ոք չեր ցանկանում «քուրք» լինել: Ստիպված էինք լինում վիճակ զցել: Ով որ «հայ» էր քաշում, անսահման ուրախանում էր, իսկ «քուրք» քաշողները տխրում էին, ակամա մասնակցում խաղին, պարզապես մանկական խաղի կարգապահության կարգով:

Մենք մեծանում էինք այս ոգով:

Պիպերի համար փոխանակ ասելու «կծու է», ասում էինք «տաճիկ է»:

Մեր բարբառում տաճկընալ կամ թրքանալ, կը նշանակեր՝ զայրանալ, վայրենանալ:

Համբերանքս հատավ, տաճկըցա, ասում էինք...

Եվ զալիք սերունդները կը պատմեն մի զարմանալի հեքիաթ:

«Լինում է, չի լինում, մի փոքրաթիվ և հին ժողովուրդ է լինում, որ ապրում էր Վանա ծովից մինչև Միջերկրականը, Բաղդատից մինչև Բյուղանդիոնը: Լինում է այդ հին ժողովուրդը հողագործ, աղքատ, արհեստավոր, մտավորական, վաճառական, կալվածատեր, բանկիր, պետական բարձր պաշտոնատար, փողոցների կեղտն հավաքող, ծառա, ճորտ և այլն: Այդ ժողովրդին սիրաբորբոք սիրում են իր հարուստ ցեղակիցները նրա սահմաններից դուրս, սիրաբորբոք սիրում են նրանց և Արևմտյան պետությունների մինհստրները, որովհետև այդ ժողովուրդն ուներ սև ու սիրուն աչքեր և տարածում էր կուլտուրա ողջ խավար Արևելքում: Սիրաբորբոք սիրուց մղված՝ իր հարուստ ցեղակիցները և Արևմտյան մինհստրները հրում են այդ ժողովրդին դեպի կոհիվ իր հարևանների դեմ, հարևաններ, որոնք տարբեր էին կրոնով, արյունով և կուլտուրայով, ունեին սուրեր և զրահ, զորք, ռազմատորսիդ և գերակշիռ թիվ: Լինում է, չի լինում, մեծ պատերազմ է լինում: Ողջ աշխարհը բռնում է վառողի ծուխը, և արյան գետեր են հոսում: Հին այդ ժողովրդի ականջին զոռում են մինհստրները և հարուստ ցեղակիցները. «Եկել է ազատության ժամը, խփի՛ր քո հարևանին, խփի՛ր նրա մահակին քո խաչով»: Հին այդ ժողովրդի սև ու սիրուն աչքերը փայլում են ազատության տենչից, սկսվում է անհավասար կոհիվ, զարկում են, զարկվում, և

հին այդ ժողովրդից մնում է միայն մի փշուր՝ իբրև կոշմարային հիշատակ:

Ապա գերազույն ու վսեմ ցինիզմով հոհոում են մինիստրները և հարուստ ցեղակիցները՝ ոսկորների և մոխիրների վրա:

Եվ երկնքից ընկնում է երեք խնձոր...»